

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
13	Փետրվար	2019 թ.		Բ	4530690791
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
13	Փետրվար	2019 թ.		Սերիա	Համար
			Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ		
Պայմանագիր			[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)					
[7.1] ՀԴՄ կտրոնի համար					

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	3	5	3	8	1	1	2
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[10] Անվանումը	«ՎԻ ԳՐՈՒՊ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)							
[11] Բանկային տվյալները	Ամերիաբանկ ՓԲԸ		N 1570015111280200					
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	Յրդ միկ.շրջ. 23 18							
[13] Լրացուցիչ տվյալներ								

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	5	0	6	6	3	4
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	ՀՀ ֆին.նախ.աշխ.գործ.վարչ.		N 900011180081					
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ Խորհրդարանի 6							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր	Համար						
		Ամսաթիվ						

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
№№ Ը/Գ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորներ	Ընդհանուր ծավալը կամ ծանոթանկաշ թքանքը	Միավորի գինը	Չեղյ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Ֆրանսերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	43	3580		153940
2	Հայերեն-պարսկերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	6	2900		17400
3	Հայերեն-պարսկերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	10	2900		29000
4	Հայերեն-պարսկերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	8	2900		23200
5	Հայերեն-ռուսերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	3	2300		6900
6	Հայերեն-գերմաներեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	1	3655		3655
Ընդամենը						234095

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)
STEPANYAN HMAYAK 2301850293

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝
GRIGORYAN SUSANNA 7403690397

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

13/02/2019 11:45:14

15/02/2019 09:08:41

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
թարգմանիչ հրավիրերու մասին

22.01.2019թ.

ք. Երևան

**ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազ
Վ.Ռ. Հարությունյանու, ուսումնասիրելով թիվ 19204297 քրեական գործի կյուրթերը.**

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հասկացվու կարևոր գործերի քննության վարչությունում քննվող թիվ 19204297 քրեական գործով Կարեն Վարիթի Լազարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, 329-րդ հոդվածի 1-ին մասով /երկու դրվագ/ և 325-րդ հոդվածի 1-ին մասով /երկու դրվագ/:

Քրեական գործի նախաքննության ընթացքում իրավական օգնության միջնորդություն է ուղարկվել Ֆրանսիայի Հանրապետության իրավասու մարմիններին՝ մեղադրյալ Կարեն Լազարյանի վերաբերյալ մի շարք փաստաթղթեր սրամատրելու խնդրանքով:

20.03.2018թ. թիվ 19204297 քրեական գործը հաստատված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան:

05.12.2018թ. ՀՀ զինվորական կենտրոնական դատախազությունում սրացվել են քրեական գործով Ֆրանսիայի Հանրապետության իրավասու մարմիններին ուղարկված իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդության կապակցությամբ սրամատրված փաստաթղթերը՝ Ֆրանսերեն լեզվով:

Նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ այլ լեզվով փաստաթղթերը քրեական գործին կցվում են դրանց հայերեն թարգմանությունների հետ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ 19204297 քրեական գործով Ֆրանսերեն լեզվով սրացված փաստաթղթերը հայերեն թարգմանելու համար որպես թարգմանիչ հրավիրել «Վի-Ֆրոպ» ՍՊ ընկերության թարգմանիչ Հատիկ Մարտի Խաչատրյանին, ծնվ. 05.01.1982 տղմված թիվ 16, որված ՀՀ արդարադատության նախարարությունում, թվ. 16.05.2019:

Դատախազ՝ *[Ստորագրություն]*
[Ստորագրություն]



ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

24 հունվարի, 2019թ.

ք. Երևան

ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության նկատմամբ հսկողության վարչության դատախազ Գ. Հովակիմյանս, ուսումնասիրելով մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84104518 քրեական գործն ըստ մեղադրանքի Յուսեֆ Իսայի Ռասայի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 268-րդ հոդվածի 1-ին մասով,

ՊԱՐԶԵՑԻ՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում քննված թիվ 84104518 քրեական գործն ըստ մեղադրանքի Յուսեֆ Իսայի Ռասայի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 268-րդ հոդվածի 1-ին մասով, 2019 թվականի հունվարի 23-ին կազմված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության նկատմամբ հսկողության վարչություն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քրեական դատավարությանը մասնակցող անձինք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը: Քրեական դատավարությանը մասնակցող մեղադրյալին, եթե նա չի տիրապետում հայերենին, դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները»:

Նկատի ունենալով, որ մեղադրյալ Յուսեֆ Իսայի Ռասան չի տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում է պարսկերեն լեզվին և իր հաշվին թարգմանություն ապահովելու ցանկություն չի հայտնել, ուստի մեղադրական եզրակացությունը և այն հաստատելու մասին որոշումը մեղադրյալին հասկանալի լեզվով նրան հանձնելու համար և նշված փաստաթղթերը հայերենից պարսկերեն թարգմանելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «ՎԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Կրիստինա Խանիկյանին (անձնագիր՝ AG 0494708, տրված՝ 04.06.2005թ. 011-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 07.06.2010թ.):

Կրիստինա Խանիկյանն ունի համապատասխան կրթություն ազատորեն տիրապետում է հայերեն և պարսկերեն լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածով և 277-րդ հոդվածի 4-րդ մասով,


ՈՐՈՇԵՑԻ՝

Յուսեֆ Իսայի Ռասայի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում քննված և մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84104518 քրեական գործով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «ՎԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Կրիստինա Խանիկյանին (անձնագիր՝ AG 0494708, տրված՝ 04.06.2005թ. 011-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 07.06.2010թ.):

Կրիստինա Խանիկյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանիչ պարտականություններին և իրավունքներին:

Կրիստինա Խանիկյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանիչ կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

**ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության
դեմ ուղղված հանցագործությունների քննության նկատմամբ հսկողության
վարչության դատախազ** **Գ. Հովակիմյան**



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ



Կրիստինա Խանիկյան

«24» 01 2019 թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

24 հունվարի, 2019թ.

ք. Երևան

«Վ» գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության նկատմամբ հսկողության վարչության դատախազ Գ. Հովակիմյանս, ուսումնասիրելով մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84104718 քրեական գործն ըստ մեղադրանքի Մոջտաբա Ալիի Էզենդինֆումեշիի՝ «Վ» քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով,

ՊԱՐԶԵՑԻ՝

«Վ» պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում քննված թիվ 84104718 քրեական գործն ըստ մեղադրանքի Մոջտաբա Ալիի Էզենդինֆումեշիի՝ «Վ» քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 2019 թվականի հունվարի 21-ին կազմված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է «Վ» գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության նկատմամբ հսկողության վարչություն:

«Վ» քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քրեական դատավարությանը մասնակցող անձինք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը: Քրեական դատավարությանը մասնակցող մեղադրյալին, եթե նա չի տիրապետում հայերենին, դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը»:

«Վ» քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները»:

Նկատի ունենալով, որ մեղադրյալ Մոջտաբա Ալիի Էզենդինֆումեշին չի տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում է պարսկերեն լեզվին և իր հաշվին թարգմանություն ապահովելու ցանկություն չի հայտնել, ուստի մեղադրական եզրակացությունը և այն հաստատելու մասին որոշումը մեղադրյալին հասկանալի լեզվով նրան հանձնելու համար և նշված փաստաթղթերը հայերենից պարսկերեն թարգմանելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «ՎԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Կրիստինա Խանիկյանին (անձնագիր՝ AG 0494708, տրված՝ 04.06.2005թ. 011-ի կողմից, «Վ» ԱՆ տեղեկանք՝ տրված 07.06.2010թ.):

Կրիստինա Խանիկյանն ունի համապատասխան կրթություն, ազատորեն տիրապետում է հայերեն և պարսկերեն լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածով և 277-րդ հոդվածի 4-րդ մասով,

ՈՐՈՇԵՑԻ՝

Մոջտաբա Ալիի Էզենդինֆումեշիի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում քննված և մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84104718 քրեական գործով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «ՎԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Կրիստինա Խանիկյանին (անձնագիր՝ AG 0494708, տրված՝ 04.06.2005թ. 011-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 07.06.2010թ.):

Կրիստինա Խանիկյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:

Կրիստինա Խանիկյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

**ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության
ղեմ ուղղված հանցագործությունների քննության նկատմամբ հսկողության
վարչության դատախազ** **Գ. Հովակիմյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ

Կրիստինա Խանիկյան

«24» 01 2019թ.

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

29.01.2019թ.

ք. Երևան

«Ա» գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ Հ. Գ. Ենոքյանս, ուսումնասիրելով Մոհամմադ Սորխաի Ազադի վերաբերյալ «Ա» պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունից մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 45155418 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

«Ա» պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում քննված թիվ 45155418 քրեական գործն ըստ մեղադրանքի Մոհամմադ Սորխաի Ազադի՝ «Ա» քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 268-րդ հոդվածի 1-ին մասով, 2019 թվականի հունվարի 24-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է «Ա» գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության նկատմամբ հսկողության վարչություն:

«Ա» քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քրեական դատավարությանը մասնակցող անձինք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը: Քրեական դատավարությանը մասնակցող մեղադրյալին, եթե նա չի տիրապետում հայերենին, դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը»:

«Ա» քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները»:

Նկատի ունենալով, որ սույն քրեական գործով մեղադրական եզրակացությունը ենթակա է հաստատման, իսկ մեղադրյալ Մոհամմադ Սորխաի Ազադը չի տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում է պարսկերեն լեզվին և իր հաշվին թարգմանություն ապահովելու ցանկություն չի հայտնել, ուստի մեղադրական եզրակացությունը և այն հաստատելու մասին որոշումը մեղադրյալին հասկանալի լեզվով նրան հանձնելու համար և նշված փաստաթղթերը հայերենից պարսկերեն թարգմանելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «ՎԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Կրիստինա Խանիկյանին

(անձնագիր՝ AG 0494708, տրված՝ 04.06.2005թ. 011-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 07.06.2010թ.):

Կրիստինա Խանիկյանն ունի համապատասխան կրթություն ազատորեն տիրապետում է հայերեն և պարսկերեն լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածով և 277-րդ հոդվածի 4-րդ մասով,

ՈՐՈՇԵՑԻ՝

Մոհամմադ Սորխաի Ազադի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում քննված և մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 45155418 քրեական գործով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «ՎԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Կրիստինա Խանիկյանին (անձնագիր՝ AG 0494708, տրված՝ 04.06.2005թ. 011-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 07.06.2010թ.):

Կրիստինա Խանիկյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանիչ պարտականություններին և իրավունքներին:

Կրիստինա Խանիկյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանիչ կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ




Հ. Գ. Ենոքյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ



Կրիստինա Խանիկյան

«29» 01 2019թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

31.01.2019թ.

ք.Երևան

Ես, ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ Լ.Մանուկյանս, ստանալով ՀՀ գլխավոր դատախազի կարգադրությունը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ Տ.Շ. ՍԱՆԳԻՆՈՎԱՅԻ իրավունքն ապահովելու վերաբերյալ կարգադրությունը և ուսումնասիրելով թիվ 21/32-03-19 վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

03.01.2019թ. ՏԱԽՄԻՆԱ (ՏԱՀՄԻՆԱ) ՇԱՐԻՖԻ ՍԱՆԳԻՆՈՎԱՅԻ հայտնաբերվել և ձերբակալվել է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) իրավապահ մարմինների կողմից, այդ մասին հայտնվել է Տաջիկստանի Հանրապետության (ՏՀ) իրավասու մարմիններին:

31.01.2019թ. որոշում է կայացվել Տ.Շ. ՍԱՆԳԻՆՈՎԱՅԻ հանձնումը ՏՀ իրավասու մարմիններին թույլատրելու մասին:

ՀՀ գլխավոր դատախազի նույն օրվա կարգադրությամբ հանձնարարվել է ապահովել Տ.Շ. ՍԱՆԳԻՆՈՎԱՅԻ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավունքի իրացումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է ստորագրությամբ հաստատել [...] քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:

Սկստի ունենալով, որ Տ.Շ. ՍԱՆԳԻՆՈՎԱՅԻ չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, իսկ ՀՄԱՅԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԸ (AM սերիայի №0679214 անձնագիր) համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնահասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճարելի դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով և 478.4-րդ հոդվածի 2-րդ մասով,


ՈՐՈՇԵՑԻ

1. Տ.Շ. ՍԱՆԳԻՆՈՎԱՅԻ հանձնման թույլատվության վերաբերյալ որոշման ռուսերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՀՄԱՅԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ (AM սերիայի №0679214 անձնագիր, ՀՀ արդարադատության նախարարի 10.06.2013թ. տեղեկանք) և նրան ծանոթացնել ՀՀ

քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:


**Միջազգային-իրավական
համագործակցության վարչության պետի տեղակալ**



Լ. Մանուկյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ
ՀՄՍՅԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ



«31» 01 2019թ.

ՀՄՍՅԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ



«31» 01 2019թ.

ՈՐՈՇՈՒՄ
Թարգմանիչ հրավիրելու մասին

08.02.2019թ.

ք. Երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության (վարչություն) դատախազ Ա.Խաչատրյանս, ուսումնասիրելով №44105116 քրեական գործով հետախուզվող ԳՐԻՇԱ ԱՐԱՄԻ ՀԱԿՈՒՅԱՆԻ վերաբերյալ վարչությունում առկա փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) գլխավոր դատախազությունը «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի համաձայն 10.10.2018թ. դիմել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության (այսուհետ՝ ԳԴՀ) իրավասու մարմիններին՝ №44105116 քրեական գործով հետախուզվող ԳՐԻՇԱ ԱՐԱՄԻ ՀԱԿՈՒՅԱՆԻ քրեական հետապնդման ենթարկելու նպատակով ՀՀ իրավասու մարմիններին հանձնելու միջնորդությամբ:

Հետագայում ԳԴՀ իրավասու մարմինները՝ Գ.Ա. ՀԱԿՈՒՅԱՆԻ հանձնման մասին ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությունը քննարկելու նպատակով սահմանված կարգով պահանջել լրացուցիչ տեղեկություններ (երաշխիքներ), որոնք ստանալու նպատակով ՀՀ գլխավոր դատախազությունը դիմել է ՀՀ արդարադատության նախարարությանը:

08.02.2019թ. ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել են ՀՀ արդարադատության նախարարի կողմից տրված երաշխիքները (№03/17.2/2541-19 գրությունը), որն անհրաժեշտ է ուղարկել ԳԴՀ իրավասու մարմիններին՝ Գ.Ա. ՀԱԿՈՒՅԱՆԻ հանձնման մասին միջնորդության հետագա ընթացքը ապահովելու նպատակով:

«Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածի համաձայն՝ «Փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայցող կամ հայցվող կողմի լեզվով: Հայցվող կողմն իր ընտրությամբ կարող է թարգմանություն պահանջել Եվրոպայի Խորհրդի պաշտոնական լեզուներից մեկով»:

Սույն հոդվածի կապակցությամբ ԳԴՀ կողմից 01.01.1977թ. արված վերապահման համաձայն՝ հանձնման մասին միջնորդությունը և կից փաստաթղթերը պետք է ներկայացվեն գերմաներեն կամ ԵՄ պաշտոնական լեզուներից որևէ մեկով:

Համաձայն ՀՀ ԱԳՆ միջոցով ստացված ԳԴՀ ԱԳՆ 02.08.2018թ. հայտագրի, գերմանական կողմը պահանջել է Գ.Ա. ՀԱԿՈՒՅԱՆԻ հանձնման արարողակարգում անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել գերմաներեն թարգմանությամբ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հանձնման մասին միջնորդությունը լրացնող տեղեկությունները (տվյալ դեպքում լրացուցիչ երաշխիքները) համարվում են միջնորդությանը կից փաստաթղթեր և այն, որ այդ փաստաթղթերը պետք է ներկայացվեն գերմաներեն կամ ԵՄ պաշտոնական լեզուներից որևէ մեկով,

անհրաժեշտություն է առաջացել թարգմանել ՀՀ արդարադատության **հիշյալ** գրությունը՝ ԳԴՀ իրավասու մարմիններին ուղարկելու նպատակով:

Վերոգրյալի հիման վրա, նկատի ունենալով, որ ՍԱԹԵՆԻԿ ՀԱՅԲԱՊԵՏԻ ՀԱԹՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության 83-րդ հոդվածով, «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Գ.Ա. ՀԱԿՈՒՅԱՆԻ հանձնման մասին միջնորդությունը լրացնող ՀՀ արդարադատության նախարարի կողմից տրված երաշխիքների գերմաներեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՍԱԹԵՆԻԿ ՀԱՅԲԱՊԵՏԻ ՀԱԹՅԱՆԻՆ (անձնագիր BA սերիայի №0387407, ԵՂՀ դիպլոմ Ա № 003927) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:


Միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ



Ա.Խաչատրյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

**Թարգմանիչ՝
ՍԱԹԵՆԻԿ ՀԱԹՅԱՆ**



«08».....02... 2019թ.